

կանին պէս ամէն անգամ բացուելու գոցուելու » :

Այս զանազան կատաղածութեան նըշանները, որ ըսինք, բուն կատաղութենէ դեռ շատ առաջ կ'ունենայ շունն, որոնք հետզհետէ հիւանդութեան հետ միատեղ կը գորանան : Քիչ ատենուան մէջ չարաչար կը սաստկանան ասոնք . կատաղած շան դէմքն սոսկալի է այն ժաւանակը, աչուքներն մըթնշաղ լուսով մը կը փայլին և արհաւիրք կը շնչեն . կատաղութեամբ ինչ որ գտնայ կը խածատէ . և թէ կարծր բան մը հանդիպի ակռաները կը կոտորտէ առանց ցաւոց ճիչ մը հանելու : Բայց այս կատաղութիւնն երկարատև չէ . մերթ կը հանդարտի կենդանին, և մերթ ալ բոլորովին անզգայ կը դառնայ . յետոյ թուլութիւն մը կը տիրէ վրան . հետզհետէ կատաղութիւնը քիչ անգամ կը բըռնէ . անդամներն

կը տկարանան կը լուծուին, և վերջապէս խեղճութեամբ կը սատկի :

Հիւանդութեան վերջի եղանակին նշաններն այնչափ յայտնի են՝ որ ո՛ր և իցէ մարդ ալ կրնայ ճանչնալ . ուստի հիւանդութեան առաջին եղանակին վրայ, կ'ուզենք Պ. Պուլէյին հետ, դարձը նեղ ամենուն ուշը, յորում կենդանին՝ քալուածքին մէջ մասնաւոր խռովութեան նշան մը չցուցնենք :

Չհաւատանք ուրեմն ջրվախութեան իբրև անվրէպ նշան, երբ անոր հակառակն է ապահով նշանն . բայց զգուշանալք ամէն ժամանակ այն շունէն՝ որ անդադար շարժման մէջ է առանց մասնաւոր վախճանի, որուն ախորժակն գոց է, որուն հաջուածքն տարբեր է, որ ցաւոց մէջ համր կը կենայ, որ չափազանց զտէրը սիրելով՝ սովորականէն աւելի զայրազնոտ է ուրիշ շանց դէմ :

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ի ՓՈՔՐ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅՍ

Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ա

ԵԿԵՂԵՑԻՔ, ԵՒ ՎԵՍՏԱՐԱՆՔ. — Ի շուրբ և 'ի պարծանս համարեսցի ոչ Սերաստիոյ միայն, այլ և ամենայն Ասիոյ՝ նորաչէն եկեղեցին Աստուածածնի ահեղ մեծութեամբն, հոյակապ բազմագմբէթ և բովանդակ քարաչէն : — Սուրբ Սարգիս, նոյնպէս քարաչէն, այլ փոքր, յորում է գերեզման Ներսեսի կաթողիկոսին Սըսոյ, վախճանելոյ 'ի Ռ.Ղ (1641) : — Սուրբ Վլաս քարաչէն և փոքրիկ : — Են և այլ ևս երեք մատրուկք անշուք . Սուրբ Մինաս, Ամենափրկիչ, և Սուրբ Վլաս, յորում է և գերեզման նորա յաճախեալ յուխտաւորաց յամենայն ազգէ վասն փողացաւի, յորմէ պօղազ եվլիաւը կոչեն զնա տաճիկք : — Եւստուատիոսեանց գերեզմանք երեցունց և եթ՝ առնթեր միմեանց կան 'ի մեծ գերեզմանոցին Տաճկաց, անշուք չիրմօք . իսկ միւս երկոցուն՝ փոքր մի 'ի բացեայ 'ի նոցանէ : — Սև հողեր . այսպէս կոչեն զգերեզմանատունն Հայոց որ է 'ի մէջ քաղաքին, սակս անդ կոխան առնելոյ լէնկթիմուրայ զմանկտին Սերաստիոյ : — Լիճն Սերաստիոյ յորում նահատակեցան քառասուն վկայքն, կոչի Քառասուն մանուկ . սակայն լիճն ցամաքացեալ է այժմ, և յաւանդութենէ միայն գիտեն զտարածու

թիւն նորին . այլ ակն բխեալ աղբերն կայ տակաւին . զորով որմ ածեալ պատեցին սակաւ ամօք յառաջ , դուռն բաց 'ի միոյ կողմանէն առնելով վասն ուխտաւորաց : — Մօտ 'ի նա է գերեզմանատուն այլ , զոր և ֆառառն մանուկ կոչեն . յորում ցուցանեն 'ի միում վայրի զգերեզման վկայիցն քառասնից , խորտակեալ շիրիմն առնթեր միմեանց եղեալ անշուք ամենեկին և անպատասպար : — Թաղն Հոլթար որ արդ որիչ է 'ի բուն քաղաքէն , խանձարուրք է Մխիթարայ Աբբայի , ծնելոյ անդ յամի 1676 :

ՕՒ ԵՒ ՊՏՂԱՅԵՐՈՒԹԻՒՆ . — Թէպէտ և ցրտագին է օդ Սեբաստիոյ , այլ առողջարար յոյժ . և 'ի ցրտութենէ անտի թերևս անպտուղք են պարտէզք նորա . այլ լիանայ պտղովք այլուստ . իսկ նորա բերք են ցորեան և գարի առատ :

ԱՆՏԸՐ ՎԱՀԱՊ . — Արտաբոյ քաղաքին 'ի սպառուածի լերին է մզկիթ մի զոր Ալտըր վահապ դագի ասեն , և ոմանք 'ի քրիստոնէից Սուրբ Յոհաննէս : Երեք մահարձանք են 'ի նմա . 'ի միումն է գերեզման նորին Ալորը վահապի . յերկրորդումն չորից տէրվիչաց նորին , իսկ երրորդն է վճարանք : Առաջնոյն դուռն արծաթի էր , զոր զողոց 'ի բաց տարեալ , վերստին շինեցաւ :

ՍՈՒՐԱ ՆԵՄՆ . — Կիսով ժամաւ հեռի 'ի Սեբաստիոյ ընդ հիւսիսակողմն է հրոչակաւոր մենաստանն Սուրբ Նշան կոչեցեալ 'ի բարձրահայեաց դաշտավայրի , և աթոռանիստ է առաջնորդի քաղաքին : Երեք եկեղեցիք են նորա փոքունք , Սուրբ Նշան , Սուրբ Կարապետ և Աստուածածին . յերկրորդումն է գերեզման Պետրոսի Գետադարձ հայրապետի , որ 'ի գերեզմանատանէն փոխադրեցաւ այսր ¹ , և հանդէպ նորա թէոդորի աբեղայի . և առ դրանն հաստատեալ են զիջման քարն որ 'ի լճէն քառասնից բերաւ այսր : — Քառորդաւ հեռի 'ի սուրբ Նշանէ գոյ և այլ մենաստան Անապատ ասացեալ , որոյ եկեղեցին ևեթ կանգուն կայ և արտաքին որմունք մենաստանին . իսկ բնակարանքն իսպառ աւերակք :

ԲՈՒԳՆԻՓ . — Ի Սեբաստիոյ ժամաւ և կիսով հեռի յարեւելակողմն նորա է գիւղն Հայոց ԲՈՒԳՆԻՓ , յորում են տունք 165 , և ոգիք իբր 1300 . եկեղեցի նորա յանուն սրբոյն Սարգսի մեծ և նորաչէն և համայն քարակերտ . երկայնութիւն նորին 20 մեդր և լայնութիւն 14 : Հետաքնին ոմն ուսումնասէր 'ի խնդիր եղեալ ճգբիտ պատմութեան նախնի բնակութեան Հայոց 'ի գիւղս յայս , և թէ ուստի սերեալ և գաղթեալ իցեն , եգիտ 'ի յիշատակարանի գրոց գրեւոյ յամին 1631 այսպէս . « Բագրատունիք , այն է Բագնիք , 'ի սմանէ ասի յոմանց թէ էին 'ի ցեղէն բագրատունեաց , և եկեալ աստ արարին հիմնարկութիւն , և էին տունք իբր եօթն . » և յետոյ 'ի գուհկաց դարձուցեալ զԲագրատունիքն Բագնիք . և է իբր ժամաւ » և կիսով հեռի 'ի քաղաքէ Սեբաստիոյ . և այժմ են 'ի սմա տունք իբրև հնգե » տասան . 'ի թուին Հայոց ՌՁ » : Եւ է գաղթել նոցա 'ի ժամանակս վրդովելոյ աշխարհիս . յորմէ ոմանք 'ի Բագրատունեաց հատուած եղեալ աստ բնակեցան , որպէս և եկեալքն 'ի Խոռխոռունեաց ցեղէ 'ի Խոռխոռն 'ի զուարճալի դաշտին և 'ի ջրարբի , ինն ժամաւ հեռի 'ի Սեբաստիոյ յարեւելս կոյս . և Խոռխոռն մականունդ :

¹ Բայց մարմին հայրապետին՝ որպէս և արքային Սենեքերիմայ՝ փոխադրեալ երեւի 'ի Վարազայ վանս , 'ի Վան , ուր են երկոցուն ևս գերեզմանք :

լսի տակաւին 'ի Բագնիք : Դարձեալ եկեալքն 'ի Պինկէօլ լերանց կարնոյ բնակու-
թիւն կալան երեք ժամաւ հեռի 'ի Սեբաստիոյ յարևելս հարաւոյ նորա , առ աղա-
հանս , և կոչեցաւ տեղին Պինկէօլ մինչև ցայսօր : Հնութեան գեղջն Բագնիքոյ վը-
կայէ և խաչքարն ԶԺԶ (1267) թուականաւ՝ որ կայր 'ի հին եկեղեցւոյ , և այժմ
ազուցեալ են յորմն նորաչէն եկեղեցւոյն յարևմտից կողմանէ 'ի բարձու : Առա-
ջի բեմին 'ի կճեայ վիմափոր շիրմի ամփոփեալ պահին ոսկերք տեսան Միքայէլի
քահանայի նահատակելոյ յամին 1708 'ի 6 մայիսի , որ նախ 'ի հասարակաց գե-
րեղմանատան թաղեալ , և 'ի նորոգ շինութեան եկեղեցւոյն փոխադրեցաւ անդ :

ԳԼԽՅԵՂ, ԵՒ ՍԵՒԵՐԻԱՆՈՍԻ ԳՆՐԵՋՄԱՆ. — Ի հարաւոյ արևելից Սեբաստիոյ է գիւղն
Գլխտեղ , տեղի նահատակութեան Սեւերիանոսի սեբաստացւոյն . այլ գերեղման
նորա հեռի է անտի կէս ժամաւ 'ի նոյն գիրս 'ի վերայ բլրոյ առ ոտամբ մեծի քա-
րաժայռին , և աղբիւր բխեալ առ նովաւ :

ՍՈՒԿԵՐ. — Յարևելից կողմանէ Սեբաստիոյ իբր երեք ժամաւ հեռի 'ի նմանէ
դոյ քարաժայռ մի մեծ սենեկաձև փորեալ 'ի մէջն , զոր կոչեն Սոխկեր կամ
Սոխկերի . քանզի աւանդեն բնակեալ 'ի նմա 'ի հնումն երկուց ճգնաւորաց և կե-
րակրեալ սոխով և հացիւ . որոց 'ի բարեկենդանի միս եղեալ առաջի սկսանին
վիճաբանել յաղագս պէսպէս խնդրոց մինչև ցմեծ հինգշաբաթի , մոռացեալ
զկերակուրն . և լուր եղեալ իրացն 'ի քաղաքին , գան առ նոսա վարդապետք և
տեսեալ զմիսն առաջի նոցա և դայթակղեալ ընդ լուծումն պահոց , յանդիմա-
նեն . և նոցա պնդեալ թէ ոչ ապաքէն տակաւին օր բարեկենդանի է , շինեալ
մեկնին անտի , զաւուրն ճշդութիւն իմացուցեալ նոցա : Եւ է քարայրն բաժա-
նեալ յերկուս սենեակս առ երի միմեանց , միոյն կործանեալ առ կակղութեան
քարին , միւսն կանգուն կայ տակաւին . որոյ յաջմէ մտիցն է արձանագիրս .

ՆՈ՞ՆԱՅ ԵՍ ՀԱՅՐ ՍտեփանՈՍ ՅԱՆԳԱ ՆԿԱՅԱ ԵՒ ՅԱՒՐԻՆԵՑԻ ՍՈՐԲ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՈՒ ԱԿԱՆԻՆ ՀԱՅ՝ : ԽԷ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՃ

Գիւղօրէք Սեբաստիոյ ասին լինել 300 . յորոց են իբր երիւր մասամբն որք 'ի տախ-
տակիդ , որ և աստէն նշանակեալք : Դավուա , Զէլէպիլէր , Սէրփինճուք , Շնքու-
ռակ , Մէճիտ , Ղալտին , Իմարէթ , Շէհրիստան , Իշխանի , Եաշճապէլ , Շէհպէկ ,
Մէհէմմէճուք , Աճը փունար , Սէյֆիկ , Թախտուլթ , Ուլաշ , Հաճի միրղէ , Ղարա-
ճալար , Դդամաճ , Ղուլամ քեօյ , Ղուլ Խուսուֆ , Թէօռնիւք , Արմուտլու , Մամա-
ղա , Պօղազքէսէ , Մօլօշ , Զամպախար , Գլխտեղ , Ըժղա , Պինկէօլ , Խոշապէնք , Է-
միրխան , Գզըլճագչլա , Թախտուքէման , Տուզասար , Եափու , Բաղարջ , Քէսիւ-
րիւք , Ճէլալու , Ղարաեռնկ , Ֆլընտուր , Թորոսլու , Խորսոնա , Ղավրազ , Կէռնէ ,
Կոլտուն , Կափուա , Պետրոսի կամ Խօճասար , Կամիս , Եարասար , Ճիհրին , Թափ-
շանլը , Քոթնի , Տէփրէնտ , Տուզլա կէօզիւ , Բագնիք , Խանժար , Զարբուրդ , Էօզէն ,


Պախճաճուկ, Ողնավուտ, Բրաբերդ, Եէնիճէ, Ճէնճին, Թոտորակ, Տէվէքսէ, Զառա, Քահրաւ, Եաբախ, Գեղկիկ, Պաշը պէյլիք, Որոզուտ, Ղարաճալար, Այ-տօղմուշ, Սարը հասան, Վէլլէտին, Ղարաճաէօրէն, Էյնէպէկ, Զախմախ, Ղալլն, Տիրէքլի, Պէտէլ, Տէրէ քեյի, Նաւրուզ, Պայաթ, Մէնթէշէ, Զաղլաղան, Եէնիխան, Ղափախ, Սէրէնկ, Զալլու, Տաթլուճաք, Խապասախալ, Քիւրտլէր քեյի, Խոյինճիկ, Կէշիլի, Ղայատիպի, Մէնչիւրլի, Խանլը, Կէօզմէն, Տէլիքլի թաշ, Պէքճիւղաղ, Տիւկէր, Գարապալլըզ, Օվաճըկ, Ալահաճի, Գուրտլափան, Ատիս, Ղուզէօրէն, Ղազիքեյ, Զէնկիւ, Ագճախան, Սալալթ, Ղումաճօղլի, Քէ-րիմլու, Պէյնէպէկ, Զաշուր, Զաղլաղան:

Շ Է Պ Ի Ն Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ա Ր

Տեսիլ գիւղաքաղաքիս 'ի հեռատանէ նման է Անկիւրիոյ, լեռոն քարաժայռ 'ի միջի և 'ի գագաթան բերդ փոքրիկ, զստորոտոյն տունք և շուկայք, յորս ոչ ինչ նշանաւոր: Յաչարլուքենէ ժողովրդեան տեւէ տակաւին վաճառականութիւն նորա առաւել քան յայլ մերձակայ քաղաքս, զի և երթեւել բազում է անդ: Բնակիչք նորա Տաճիկք, Հայք և Յոյնք. տունք Հայոց հաշուին 400: Անուանի է 'ի բերսն գառլն գայլնակը, որ է սեր չորացուցեալ իբրեւ զպանիր:

Կ Ի Ի Մ Ի Ի Շ Ի Ա Ն Է

Գիւղաքաղաքս այս յինեալ է 'ի լեռանցամէջս. տունք, փողոցք և ամենայն շինուածք սկսեալ 'ի բարձանց աստիճանաբար խոնարհին մինչև 'ի ձորամէջս լեռանցն որք շուրջ պատեալ են: Զարմանայ նորեկն ընդ տխուր տեսիլ Կիւմիւշխանէի, զի և տեղի զբօսանաց և անդորր շրջագայելոյ 'ի նմա չիք և ոչ ուրեք. յոր կողմն և դարձուցանէ զՀայեցուածսն, յանդիման լինին լեռինք և քարաժայռք ահեղ բարձրութեամբ: Այլ պատճառք շինութեան գիւղաքաղաքիս զբովն ասեն, որք ոչ միայն արտաքոյ նորին են և 'ի մերձակայ սահմանսն, այլ և 'ի մէջն, 'ի խորշս քարանձաւացն և լեռանց: Գործավարք հանքացն են Յոյնք, որ և բազմաթիւ քան զՏաճիկս. և են հանք կապարի, որ առ օգգա՝ տան մի կամ երկու և դուն ուրեք հինգ տրամ արծաթոյ: Հայազգիք քաղաքիս են 200 տունք և եկեղեցի նոցա Աստուածածին փոքր և անշուք. այլ վայելուչ է մենաստանն նորաշէն ժամաւ հեռի 'ի քաղաքէն. և 'ի ճանապարհի նորա է հանք փլածոյ. զորմէ աւանդեն յաշխատել գործավարացն փլուզեալ յանկարծ, և 'ի մեռանողացն, զի բազմաթիւք էին, քառասուն գտեալ ոգիս որք Պօղոս անուանէին, յորմէ և տեղին կոչեցաւ Քրիք փռալի: Ի պողոց Կիւմիւշխանէի անուանի են երեք տեսակք տանձի, ջերմայի, շաշկաւ արմուտոռ և հաճիհաւգա:



ի կիւմիւշխանէէ փոքր մի ընդ հիւսիս խոտորեալ սկսանին գիւղօրէք Մաւ-
քայ վիճակի մինչև ցաահման Տրապիզոնի, յորոց են առաջիկայքդ, Սէսերա, Ամ-
պէլա, Վէրէնէ, Իլաքսա, Խաժավէրա, Մաւրա, Սօլտոյ, Մէքսիլա, Խաւլա, Սփէ-
լա, Մուլաքա. փօփառա, փօօջ, փօփարզա, ֆուսէռա, Տանխա, Խամուրեա, Լա-
լայանտոս, Սախնոյ, Թէրցա, Գունաքալ, Սթամա, Խամսի քէօյի, Եէր քէօփրիւ,
Քիլատ, Չիկանոյ, Չանոյ, Քօզմա, Քափի քէօյի, Խորտոկոփ առաջին և երկրորդ,
Եանանտոս, փօնտիլայա, Գռէնասա, Չավէրա, Աքօփիա, Աուրսա, Գուլթուլա,
Քօսփիտիոս, Ավուրզէն, Աքալիդա, Մէյրէմանա, Կալիանա, Վալէնա, Լիվալէ,
Մանտրանոյ, Մէսօխօր: — Ի գիւղն Եէր քէօփրիւ որ մի է 'ի դոցանէ, գետոյն
մտեալ ընդ երկրաւ՝ դարձեալ 'ի դուրս ելանէ քառորդ մի ժամու հեռաւորու-
թեամբ. և 'ի վերայ բլրոյն՝ որ սկիզբն է մտից գետոյն, յերկուս տեղիս առն-
թեր միմեանց ծակ գործեալ բորբակ, ջուր գաղջ բղխէ խոխոջալով, միօրինակ
յամենայն եղանակս տարւոյն. և վիմեղէն շրջապատք ծակուցն 'ի զօրութենէ ջրոյն
նարնջագոյն ներկանին, որպէս և տաշտ առուակին ընդ որ հոսի բխեալ ջուրն:

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

Ազգային արդի վիճակը պատմու-	— Ի ժմիտ մանիչակին	105
թեան առջև	Գարուն, գեղօնք	158
Աղանի . 117, 169, 186, 234, 258,	Գործաւոր ընտանիք մը Ռուանի	
281, 224, 354	մէջ	82
Անցք ընդ Պերեզինա	Եգիպտացւոց գրականութիւնն, ա-	
Աշոտ Ա, Հայաստան հազար տարի	րուեստն ու մեծագործութիւնը .	205, 350
առաջ . 145, 177, 209, 241, 273, 303	Իմաստասիրութիւն	334
Առանց կրակի այրած մը	Լևոն վերջին	369
Առաւօտ	Խանդ ոգւոյ	269
Աստուած աղբիւր լուսոյ և զօրու-	Ծագումն և ստացումն գիտութեանց	85
թեան	Ծոց Պայեայ	302
Արդի եւրոպացի Հայերէնագիտաց	Կանոնք առողջութեան: — Արքունք	95
երկասիրութիւնք	Կարգինալ Մորլոյ, Արքեպիսկոպոս	
Բան խրատական և պիտանի յՈսկե-	Բարիգու	56, 75
փորիկ գրոց	Հանճարեղ գրուած մը Սէն-Մարգ	
Բաշխումն մրցանակաց և խօսք Նա-	ժիրարտէնի՝ Հռովմայ և Իտալիոյ	
բողէոնի կայսեր Լոնտրայի համալ-	խնդրոյն վրայ	64
խարհական Արուեստահանդիսէն	Հացկունք և վարդք, զրոյցք Քեռ-	
պսակաւոր Գաղղիացւոց	սեայ	15
Բարիգու Նաբոլէոն լիկէոնը	Հովիւ և ձկնորս	366
Բնական օգերեւոյթ մը	Մանր գիտելիք	32, 126
Գարուն		